№ 17 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 25 1902 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 25 № 17

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է [illegible] 10—2 ժամ
(բացի կիրակի եւ [illegible] օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միջնակարգ ուսման բէֆօրմը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի ցաւալի փաստ. Նամակ Կարսից. Նամակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական յայտարարութիւնը. Կիլիկիայի կաթողիկոսութեան հարցը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՄԻՋՆԱԿԱՐԳ ՈՒՍՄԱՆ ԲԷՖՕՐՄԸ

Միջնակարգ ուսման բէֆօրմը—ահա մի կարևոր ներքին հարց, որ ներկայումս յուզում է ամբողջ Ֆրանսիան: Այդ հարցը կայևորութիւն է ստանում և մեզ համար այն պատճառով, որ մեզանում ևս միջնակարգ ուսման բարենորոգութեան հարցը հրապարակի վրա է դրված և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը լուրջ կերպով զբաղված է այդ խնդրով:

Ֆրանսիայում ևս վաղուց մեծ դժգոհութիւններ կան միջնակարգ ուսման այն եղանակի դէմ, որով առաջ էր տարվում այդ ուսումը. և վաղուց դրված է բէֆօրմի հարցը: Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը արդէն մշակել է բէֆօրմի ծրագիրը: Եւ ահա Ֆրանսիական պարլամենտը մի քննիչ յանձնաժողով նշանակեց Բիբօի նախագահութեամբ այդ ծրագիրը քննելու: Այժմ այդ ծրագիրը դարձել է բազմակողմանի քննութեան առարկայ ոչ միայն մանկավարժների, այլ և քաղաքական գործիչների, գիտնականների, հրապարակախօսների կողմից, որոնց մէջ է և արտաքին գործերի նախկին մինիստր ակադեմիկոս Հանոտօն, որը, եթէ վատ դիպլօմատ, բայց լուրջ գիտնականի համբաւ է վայելում:

Հանոտօի յօդուածները «Le Journal» լրագրում, մանաւանդ նրա մերկացումները մինչև այժմ տիրող ուսման եղանակի մասին, ընդհանուր հետաքրքրութիւն և յուզմունք են առաջացնում Ֆրանսիայում: Այդ յօդուածները ցոյց են տալիս, որ Ֆրանսիայում ևս միջնակարգ ուսումը այնպէս վատ է դրված, որ նոյն իսկ լիցէներում աւարտող պատանիները շատ թոյլ կերպով են իմանում Ֆրանսիական լեզուի ուղղագրութիւնը, աշխարհագրութիւնը և մաթեմատիկան: Նրանք ոչ միայն չեն սովորում, ինչպէս հարկն է, «կենդանի լեզուները», այլ նոյն իսկ իրանց մայրենի Ֆրանսիական լեզուն լաւ չը գիտեն, և գիտութիւններից ևս պաշար շատ քիչ են ունենում: Հանոտօի կարծիքով այդ իրողութեան գլխաւոր պատճառն այն է, որ Ֆրանսիայում ամբողջ ուսումը, թէ ստորին, թէ միջնակարգ, թէ բարձր, յարմարեցնում են գլխաւորապէս մի անխուսափելի նպատակի—դիպլօմ ստանալուն: Իսկ դրա հետևանքն այն է լինում, որ նախ՝ երիտասարդները ստիպված են մինչև 23—24 տարեկան դառնալը սովորել. իսկ այդ հանգամանքը իր կողմից առաջ է բերում շատ վնասներ նրանով, որ առկախ է թողնում ազգի գործունէութիւնը, ուշացնում է օգտակար կեանքը. երկրորդ՝ նրանք, որոնք չեն կարողանում զանազան պատճառներով բարձր ուսումն ստանալ, զբրկված են մնում մի ամբողջական, ամիսի, կեանքի մէջ օգտակար և գործադրվող ուսումից, իսկ բարձր ուսում չը ստացող երիտասարդների թիւը շատ մեծ է: Պէտք է վերացնել դիպլօմ ստանալու ձգտումը, կամ «դպրոցական նախապաշարումը», ինչպէս կոչում է Հանոտօն. պէտք է կազմակերպել «կարճ ուսում», այսինքն մի ուսում, որ շատ ժամանակ կորցնել չէ տայ երիտասարդներին, որ կարելի լինի աւարտել 17—18 տարեկան հասակում և պատանին, աւարտելով, տանէ իր հետ գիտութիւնների մի համեստ, բայց ամբողջացրած և կեանքի մէջ օգտակար, գործադրելի պաշար: Այդ նպատակին կարելի է հասնել միայն այն ձևով, որ նախնական (primaire) և երկրորդական (secondaire) կամ միջնակարգ ուսումները համաձայնեցրած լինեն, երկրորդը առաջնի շարունակութիւնը լինի, բայց այդ երկուսով ուսումը ամբողջական լինի և ամփոփ. ինչ վերաբերում է բարձր համալսարանական ուսման, նա պէտք է ծառայէ իբրև կատարելագործութիւն թէ ընդհանուր գիտութիւնների և թէ մասնագիտական ճիւղերի համար: Քանի որ պատանիների, երիտասարդների մեծ մասը, նիւթական միջոցների և ուրիշ շատ հանգամանքների պատճառով, հնարաւորութիւն չունի բարձր ուսում ստանալ, անհրաժեշտ է ժողովրդի զաւակներին տալ այնպիսի ուսում, որ նրանք առանց բարձր ուսման էլ ունենան գիտութեան թէև համեստ, բայց օգտակար և ամբողջական, ամփոփ շտեմարան, որով կարողանան կեանքի մէջ հարթել իրանց ասպարէզը և աջողութեամբ առաջ տանել գոյութեան կռիւը: Այդպիսի ուսման հետևանքն այն կը լինի, որ ազգային ընդհանուր գործունէութիւնը կուժեղանայ և ամբողջ ասպիներով առկախ չի մնայ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՑԱՒԱԼԻ ՓԱՍՏ

(Նամակ Մոսկվայից)

Դեկտեմբերի 26-ին Լազարեան ճեմարանի պատերի մէջ նոյն հաստատութեան երեկոյթն էր յօգուտ չքաւոր նախկին սաների: Երեկոյթը սկսվեց մեր անմահ բանաստեղծի՝ Գամառ-Քաթիպայի՝ «Մայր Արաքսի ափերով» երգով. պատահմամբ գլուխս մի կողմ դարձնելով նկատեցի Նստարանի վրա մի օրիորդի՝ որը թաչկինակով սրբում էր արցունքները... Ոչ ոքից անընկատելի նա սրբեց աչքերը եւ մի բոպէ զբաղելով ինքն իրան, ուշադրութեամբ սկսեց մտիկ տալ երգեցիկ խմբին:

Ո՞վ կարող էր կարդալ օրիորդի սիրաը այդ բոպէին... ինչ մտքերով էր պաշարված այդ բոպէին նրա գլուխը եւ այդ կաթիլ-կաթիլ արցունքները ինչ խորհրդաւոր նշանակութիւն ունէին...

Եթէ ես չը ճանաչէի օրիորդին (եւ այս հանգամանքում ճանաչելն էլ քիչ է), եթէ ես ծանօթ չը լինէի այդ օրիորդի ունեցած կարիքի հետ, գուցէ ես էլ շատերի նման ուշադրութիւն չը դարձնէի նրա վրա... Ես ինձ բաղդաւոր եմ զգում, որ մասամբ, եթէ ոչ բոլորովին, կարողացայ ընբռնել այդ աղի արցունքների իմաստը... այդ երիտասարդ սրտի բաբախումը... Նա՝ այդ օրիորդը, Գամառ-Քաթիպայի դուստրն էր... Մոսկվայում ատամնաբուժութեան դասեր է սովորում եւ նա մի քանի օր առաջ տեղիս նոր կազմակերպված կանանց ընկերութեան խնդիր էր տուել եւ 100 ր. նպաստ էր խնդրում, որը պիտի վճարէր իր կիսամեայ ուսման վճարը մինչեւ յունվարի 8-ը, որից յետոյ կարող է շարունակել իր ուսումը, եթէ ոչ զրկված լինելով դասեր լսելու իրաւունքից, հարկադրված պիտի լինի մի ամբողջ տարի կորցնել:

Ահա փաստը... ահա իրողութիւնը...

Մենք գիտենք յարգել մեր հանգուցեալ գործիչներին թանգագին արձաններ կանգնեցնելով, զարդարել նրանց շիրիմը պատկառելի մետաղից հիւսված պսակներով եւ բոպէապէս ոգեւորվելով, ներբողներ կարդալ... Մենք գիտենք խոչոր-խոչոր ճառեր խօսելով՝ հանգուցեալ գործիչին ազգի պարծանք համարել, եւ չենք նկատում նրա ընտանիքի կարիքը, թոյլ ենք տալիս, որ հանգուցեալի դուստրները իրանց գիտութեան ծարաւը յագեցնելու համար դռնէ դուռն ընկնեն եւ գթութիւն հայցեն...

Այս ցաւալի փաստը, որ ես կարողացայ նկատել, ցոյց է տալիս, որ ազգը բոլորովին անտարբեր է դէպի իր սիրելի բանաստեղծի ընտանիքը, նոյնպէս անտարբեր է եւ Նոր-Նախիջեւանը, որտեղ գործում են մի քանի բարեգործական ընկերութիւններ, որոնք կարող են եւ պէտք է օգնեն Գամառ-Քաթիպայի ընտանիքին, միայն այն պատճառով, որ Ռ. Պատկանեանը ինքը Նոր-Նախիջեւանցի էր, եւ չը պէտք է թոյլ տան, որ նրա դուստրները արա-նրա դուռը ընկնելով, օգնութիւն խնդրեն:

Զ.

ՆԱՄԱԿ ԿԱՐՍԻՑ

Յունվարի 14-ին

Ուրախութեամբ կամենում եմ արձանագրել մի համակրելի ձեռնարկի մասին, որը որչափ օգտակար, նոյնչափ եւ անհրաժեշտ է Կարսի նման յետ ընկած դաւառական մի քաղաքի համար եւ որն արդէն աւելի առաջադէմ քաղաքներում վաղուց իրագործվում է: Մի քանի պարոնների, գլխաւորապէս վիճաբանական պօրուչիկ Աւետիսեվի, ժողովրդական ուսումնարանների տեսուչ պ. Դէվեցկու, պօրուչիկ Միրիմանեանցի եւ մի քանի տիկինների, օրիորդների եւ ուրիշների նախաձեռնութեամբ, երեք շաբաթ է արդէն, իւրաքանչիւր կիրակի ժողովրդական ընթերցանութիւններ են տեղի ունենում ռուսաց լեզուով: Այդ գործին ուղղութիւն տալու եւ ղեկավարելու համար կազմված է մի մասնաժողով իր նախագահով եւ գործավարով եւ լինում են ընդհանուր ժողովներ, ուր քննութեան են առնվում զանազան հարցեր այդ գործին վերաբերեալ եւ նշանակվում են ընթերցողներ ու նիւթեր, որչափ յայտնի է ինձ, մի ամսի համար: Անդամ կարող են լինել ամենքը, երեք ռուբլի վճարելով. նրանք իրաւունք ունեն կարդալու նշանակած օրերը նախօրօք յայտնի նիւթերի մասին: Կարդացվում են ոտանաւորներ, ցոյց են տրվում մոգական լապտերով պատկերներ եւ այլն: Պատկերների մասը կառավարում է պ. Միրիմանեանցը: Որովհետեւ գործը նոր է, ուրեմն չի էլ կարող ազատ լինել թերութիւններից, որոնք ժամանակի ընթացքում կը վերացվեն:

Աւելորդ չի լինի գուցէ մի քանի խոչոր պակասութիւնների մասին յայտնել մեր կարծիքները: Նախ, որ միմիայն ռուսաց լեզուով կատարելով դասախօսութիւնները, շատ սահմանափակվում է ունկնդիրների թիւը, հետեւաբար եւ նրանց ստացած բարոյական եւ մտաւոր օգուտը, որովհետեւ այստեղ մեծամասնութիւն են կազմում տեղացի հայ, թիւրք, յոյն ազգութիւնները: Տեղական լեզուներով դասախօսելու համար, կարծում եմ, կը գտնվեն մարդիկ. փառք Աստուծու, ունենք եւ հայ ուսուցիչներ ու բժիշկներ, որոնց համար դժուար չի լինի այդ գործը: Որքան մեզ յայտնի է, դասախօսների ընդհանուր ժողովում խօսք է բացվել այդ մասին եւ մնացել է անորոշ, եթէ աչքի առաջ չունենանք մասնաւոր եւ շատ աննպատակայարմար առաջարկութիւնը, այն է՝ դասախօսութիւնից յետոյ համառօտ կերպով թարգմանել տեղական լեզուով, որը եւ մերժվում է ժողովի կողմից: Ունկնդիրները, երեւակայեցէք, ժամերով պէտք է նստեն, ոչինչ չը հասկանան եւ քնեն միայն, իսկ վերջը, մի քանի խօսքով նրանց համար պէտք է թարգմանվի կարդացածի բովանդակութիւնը առանց բացատրութեան եւ պատկերների: Ուրեմն շատ նպատակայարմար կը լինի հերթով եւ ռուսաց եւ տեղական լեզուներով կարդալը:

Երկրորդ անյարմարութիւնն այն է, որ որոշվել է դասախօսութիւնը կատարել ընթերցումով եւ ոչ բանաւոր: Այո, կը լինեն նիւթեր ինչպէս «Конекъ Горбунокъ», որոնք յարմար են ընթերցանութեան, բայց կը պատահեն նիւթեր, ինչպիսին էր երէկվայ կարդացածը երկրագնդի մասին, որի կարդալը շատ անյարմարութիւններ է ներկայացնում: 3) Եթէ ընթերցանութիւնը նշանակված է ժողովրդի համար, ուրեմն պէտք է աչկերտները եւ աշակերտուհիները այդ օրերում չը մասնակցեն, զանազան անյարմարութիւններ աչքի առաջ ունենալով, որովհետեւ կարող է այն՝ ինչ ժողովրդի համար յարմար լինել, աշակերտների համար եւ անյարմար եւ նոյն իսկ վնասակար համարվել:

Նոյն օրը երեկոյեան դերասանուհի Վասիլիեվայի եւ տեղական հայ եւ ռուս սիրողների մասնակցութեամբ քաղաքային կլուբում խաղացին Օստրովսկու «Անտեղ մեղաւորները» ռուսաց լեզուով: Խօսակցութիւն կայ հայ եւ ռուս սիրողների հետ միասին մի քանի ներկայացումներ տալու մասին, որը եւ ցանկալի է, գուցէ աջողվի էլ: Մնում է ձեռնարկողների եռանդ եւ կամք ցանկանալ:

Հ. Նոհրատեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պարիզ, յունվարի 16/29-ին

Ցաւով կը յայտնեմ, թէ այստեղի արեւելեան կենդանի լեզուների վարժարանի հայերէնի պրոֆէսօր Կարիէր վախճանվեց երկու օր ս աջ: Հիւանդութիւնն էր ցրտառութիւն եւ թոքերի բորբոքումն: Երկու շաբաթ առաջ իրան տեսայ: Ժամանակին կը յայտնեմ ձեզ, թէ ով պէտք է յաջորդէ նրան հայերէնի ամբիոնի վրա. կարծիք կայ, որ կամ պրոֆէսօր Մէյէ եւ կամ իրա Կարիէրի աշակերտ Ֆրեդերիկ Մակլէրն պէտք է լինի յաջորդը:

Կ. Բասմաջեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, դեկտեմբերի 20-ին

«Մշակի» 264-ում Էջմիածնից գրված մի նամակի մէջ Մայր-Աթոռի դրամական ներկայ ճգնաժամի խոչոր պատճառներից մէկն էլ այն է համարել պ. նամակագիրը, որ ճեմարանի վերակացուները տարեկան 800-ական ր. ռոճիկ ստանալով հանդերձ՝ նաեւ պահանջում եւ ստանում են իրանց «լուացքի եւ օսլայի գինը, թէյի ու շաքարի արժէքը եւ այլն...» եւ այդքանը դեռ բաւական չէ, իրանց եսի համար դարձել են «ամենանուրբ խոտապահանջներ»:

Բարեմիտ ընթերցողների առողջ դատողութեանը թողնելով խնդրի այն կողմը, թէ վերեւ յիշած բոլոր բաները որքան կը նպաստէին Մայր-Աթոռի մնանկութեան եւ ներկայ դրամական ճգնաժամին հասնելու գործին, սրան մի պիտի ասեմ միայն, որ պ. նամակագրի տուած բոլոր տեղեկութիւնները վերակացուների մասին սխալ են: Ճեմարանի վերակացուները ստանում են 600-ական ր. վերակացութեան վարձ, իսկ իրանց ապրուստի փոխարէն, որ ստանում են ճեմարանից, դասաւանդում են միասին 31 դաս (50 ր. դասագնով 1550 ր.), օսլայ, լուացք եւ այլն անել են տալիս իրանց ծախսով, եւ որ գլխաւորն է, մինչեւ այժմ իրանց եսի համար ոչ մի պահանջ չեն արել: Ասածներս կարող եմ հաստատել ուր հարկն է, եթէ պահանջվի:

Թէ ինչու պ. նամակագիրը չէ գրել այն, ինչ որ իրաք կայ—չը գիտեմ:

Ի դիմաց ճեմ. վերակացու ուսուցիչների՝
Ց. Թադէոսեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Վեհափառ Կաթողիկոսը օրհնութեան երկու կոնդակ է ուղարկել՝ մէկը յանուն այն բարերարների, որոնց նուիրատուութիւններով կատարվել է Թիֆլիսի Վանքի մայր եկեղեցու արտաքին վերանորոգութիւնը, իսկ միւսը յանուն պ. Աղէքսանդր Մանթաշեանցի, որը հոգացել է նոյն եկեղեցու ներքին վերանորոգութեան ու բարեզարդութեան բոլոր ծախսերը: Կիրակի, ամսիս 27-ին, Վանքի մայր եկեղեցում լինելու է յանուն բարերարների տուած կոնդակի ընթերցումը:

—

«Курьеръ» լրագրին հաղորդում են, թէ այն լուրերը, որոնք տարածված էին երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութեան մտադրութեան մասին՝ կովկասեան հանքային ջրերը մասնաւոր անձանց կապալով տալու վերաբերմամբ, բոլորովին անհիմն են: Ընդհակառակը մինիստրութիւնը ի նկատի ունի, բացի արդէն գոյութիւն ունեցող կուրորտների

խմբից, չինել կովկասեան երկրի եւ այլ տեղերում բուժարար ջրերի ուրիշ կուրորտներ։

—

Գիտութիւնների կայսերական ակադեմիան դիմել է Թիֆլիսի քաղաքային վարչութեան մի միջնորդութեամբ, որով խնդրում է 45,000 ռուբլի նշանակել Թիֆլիսի ֆիզիքական դիտանոցը իր այժմեան չինութիւնից ուրիշ տեղ փոխադրելու համար։ Գիտութիւնների ակադեմիան իր միջնորդութիւնը պատճառաբանում է նրանով, որ Միքայէլեան փողոցով, ուր գտնվում է այժմ Թիֆլիսի ֆիզիքական դիտանոցի չինութիւնը, շուտով կը սկսէ երթեւեկել էլէքտրական տրամվայ, որի հաղորդիչ թելերը կը խանգարեն դիտանոցի աշխատանքները։

—

Տեղական լրագիրներին հեռագրում են Բաթումից, թէ իշխան Անդրոնիկով, որ երկրորդ անգամ ընտրված էր Բաթումի քաղաքագլուխ, նահանգական իշխանութեան կողմից այս անգամ հաստատված է այդ պաշտօնի մէջ։

—

«Մշակի» խմբագրութեան մէջ ստացվեց 5 ռուբլի Յովսէփ քահանայ Տէր-Պետրոսեանից յօգուտ Գ. Արծրունու մահարձանի չինութեան։

—

Խարկովի լրագիրները հաղորդում են, թէ Խարկովի համալսարանի ուսանողների մէջ, որոնք մեդալներ եւ մրցանակներ են ստացել այս ուսումնական տարվայ ընթացքում ներկայացրած շարադրութիւնների համար, կայ եւ մի հայ—Կոնստանդին Սաղաթէլեան։ Սաղաթելեանը ստացել է ոսկեայ մեդալ իր շարադրութեան համար, որ կրում է «Էլէքտրական հոսանքի մինիմալ տատանումների ազդեցութիւնը նեարդերի վրա» վերնագիրը։ Համալսարանական վարչութիւնը որոշել է տպագրել այս գրուածքը «Записки Университета» պարբերական հանդէսում։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Յունվարի 19-ին, Նոր-Նախիջեւանի ակմբանոցի դահլիճում դումայի նիստն էր. ի միջի այլոց քննվում էր լուսաւորութեան մինիստրի պ. օգնականի գրութիւնը բէալական դպրոցի մասին։ Աչքի առաջ ունենալով քաղաքի ջերմ ցանկութիւնը բանալ բէալական դպրոց, մինիստրի օգնականը յայտնում էր, որ տրվում է թոյլտուութիւն, սակայն այն պայմանով, որ հայոց կրօնը աւանդվի ռուսերէն լեզուով։ Ձայնաւոր Գր. Զալիուշեան կարծում էր, որ կարիք անգամ չը կայ բանալ բէալական դպրոց։ Դուման միաձայն որոշեց խնդրել մինիստրութիւնից, որ հայոց կրօնը աւանդվի հայերէն լեզուով եւ եթէ այդպիսի թոյլտուութիւն ստացվի՝ բանալ բէալական դպրոց։»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Հրդեհների սեզոնը երկար ընդմիջումից յետոյ սկսվեց։ Այժմ համարեա թէ ամեն օր, մեծ թէ փոքր չափով, հրդեհներ են տեղի ունենում։ Շաբաթ, յունվարի 19-ին, երեկոյեան մօտ ժամի 10-ին, Սեւ-քաղաքի բնակիչները սարսափահար եղած անթիւ սուլիչների աղերսալի, բայց մի եւ նոյն ժամանակ սարսափելի ձայնից, դուրս թափվեցին իրանց բնակարաններից եւ նրանց աչքերի առաջ պատկերացաւ հրէշաւոր «կարմիր աքաղաղը»։ Այրվում էր Վեզիրովի գործարանը։ Հնոցապանի անզգուշութիւնից, կաթսան վառելու ժամանակ, վառվող շորի կտորը ընկնում է նաւթային մնացորդների առուակը, որ միացնում է կաթսաները խառնարանների (мѣшалки) հետ եւ բռնկվում։ Այդտեղից կրակը խսկոյն անցնում է խառնարանները եւ նրանք, թեով 4 հատ, բռնկվում են միմեանց ետեւից։ Խառնարաններից այրվող նաւթը դուրս է թափվում եւ կրակի գետ կազմելով՝ դիմում դէպի գործարանի խորքերը։ Այդտեղ նա իր համար այրելու առատ նիւթ է գտնում եւ ահա միմեանց ետեւից վառվում են նաւթային մնացորդների երկու ահագին չտեմարանները, 135,000 պուդանոց նաւթի պահեստը, գործիքների պահեստը եւ դրասենեակը։ Այդտեղից կրակը աւելի խորն է գնում, իր ճանապարհի վրա ընդգրկելով գործարանի բոլոր մանր ու մունր չինութիւնները, իսկ գիշերը արդէն անցնում է դէպի 4 ահագին պահեստները։ Կիրակի երեկոյեան արդէն բոլոր չտեմարանները, պահեստները եւ չինութիւնները այրվել, մոխիր էին դարձել եւ մեն-մենակ այրվում էր ահագին պահեստներից մէկը, որը հանգաւ միայն երկուշաբթի առաւօտեան։ Վնասները ահագին են։ Գործարանը ապահովագրած չէ։ Դժբախտութիւններ մարդկանց հետ չը կան։»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Մի քանի օր առաջ կայացաւ այստեղ Իտալիայից հայրենիք վերադարձած դրամատիքական տէնօր պ. Բարխուդարեանի կոնցերտը մասնակցութեամբ օր. Լիվինայի։ Պ. Բարխուդարեանի զօրեղ ձայնը, որին ամենքը գուշակում են մի փայլուն ապագայ, այդ օրը այնքան էլ զգայուն ու ճկուն չէր. նրա մէջ լսվում էր յոգնածութեան եւ վրդովմունքի չեչտը, եւ ուրիշ կերպ ինչպէս կարող էր լինել այնտեղ, ուր մի ներկայացում կամ կոնցերտ զլուխ բերելու համար հարկաւոր են անվերջ նեղութիւններ ու զոհաբերութիւններ, ուր գեղարուեստը չունի իր հովանաւորը, իսկ տաղանդը՝ իր երկրպագուն։ Օր. Լիվինան չը թողեց ցանկալի տպաւորութիւն. ըստ երեւոյթին նրա վրա էլ ազդել էր մի կողմնակի հանգամանք, որը նրա ձայնին տուել էր յոգնածութիւն։ Կոնցերտի դահլիճը կիսով չափ լիքն էր։ Երիտասարդ երգչին մի քանի անգամ վարձատրեցին բուռն ծափահարութիւններով»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղ շատ լաւ տպաւորութիւն արեցին տ. Քալանթարի նուէրը 75 ռ. եւ Պետերբուրգի ուսանողների նուէրը 50 ռ. Միքայէլ Նալբանդեանի արձանի համար։

—

ԱԽԱԼՔԱԼԻՑ մեզ գրում են. «Կիրակի, յունվարի 20-ին, աղօթատան բագում գտնվող եկեղեցական դահլիճում տեղի ունեցաւ ներկայ երէցփոխ Շահունեանի եւ նախկին երէցփոխ պ. Զերբեզեանի 1901 թւի հաշիւների քննութիւնը։ Ժողովին նախագահում էր գործակալ հայր Ատովմեանը. ներկայ էր հասարակութեան մի որոշ մասը։ Թէ հասարակութիւնը եւ թէ հաշուեհանները 1901 թւի հաշիւները գտել են կանոնաւոր, որի համար յայտնեցին իրանց շնորհակալութիւնները ներկայ երէցփոխին։ Հաշիւներից երեւում է, որ երէցփոխ Շահունեանը առայժմ ջանք չէ խնայում՝ իր ստանձնած պաշտօնում պարտաճանաչ լինելու համար։ Տեսնենք ապագան ինչ ցոյց կը տայ»։

—

ԳՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Նոր-Գօրիսից երեք վերստ հեռաւորութեան վրա գտնվում է Հին-Գօրիս գիւղը։ Հին-Գօրիսում կար մի հնաշէն եկեղեցի, ս. Գէորգ անունով։ Այս եկեղեցին խափանված է եղել։ Զորրորդ տարին է, որ ժողովուրդը իր հաշուով նորոգել ու զարդարել է եկեղեցին։ Յունվարի 5-ին, Թաթախման գիշերը, գողերը կոտրելով եկեղեցու դուռը, կողոպտում են բոլոր եկեղեցական սպասները,—երկու արծաթեայ խաչ, մէկ վակաս, մէկ փիլոն, սաղավարտի եւ խաչվառի խաչերը, հինգ հատ շապիկ, մէկ եկեղեցական գիրք, երեք հատ թաղիք եւ մէկ կարպետ եւ այլն։ Եկեղեցու վերնասը մօտաւորապէս երկու հարիւր ռուբլու է հանում։ Գողերը դեռ եւս չեն գտնված, միայն գիւղացիք կասկած են տանում թուրքերի վրա, որոնք գիւղացիների մօտ ծառայում են»։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Յունվարի 2-ին Խաչմազի երկաթուղու կայարանը գալիս են երկու անյայտ հայեր։ Իմանալով, որ երկու վերստ հեռաւորութեան վրա գտնվում է Խաչմազ գիւղը գնում են այնտեղ։ Դրանք սկսում են յանախել այնտեղի հայոց եկեղեցին բարեպաշտ եւ աստուածապաշտ ձեւացնելով իրանց, գրաւում են գիւղական քահանայ Տէր-Թոմասի ուշադրութիւնը եւ զբաղում են նրա տունը հիւրասիրվելու։ Կեր ու խումից յետոյ բարեպաշտները չչուկով հասկացնում են խոստովանահայր քահանային, որ գաղտնիք ունեն յայտնելու, խնդրում են նրան դուրս գալ իրանց հետ բակը։ Միամիտ քահանան, ոչ մի բանում չը կասկածելով, դուրս է գալիս բակը. բարեպաշտները ցոյց են տալիս քահանային մի փոքրիկ անդուկ, որը բացելով մութ տեղում, հանում են միջից ոսկի, հինգ եւ տասը ռուբլի արժողութիւնով, հաւատացնում են քահանային, որ միջի եղածը լիքը ոսկի է՝ երկու հազարից աւելի գումար, խընդրում են, որ այդ անդուկը դնէ, կամ ծախէ քահանան, քանի որ իրանք, բերողները, գալել են այդ «անդուկը», ուրեմն եւ երկիւղ են կրում հետը տանել, որպէս զի «չը բռնվեն»։ Շլացած քահանան գրկախառն տանում է բարեպաշտներին իր սենեակը. այդտեղ լինում են տանուտէրի եղբայր Բէհբութը եւ զօկ Առաքելը, որը ապրել էր Հուսարիում, բայց այնտեղ ապրուստի միջոց չունենալով, ծախել է իր տունը 430 ռ., մտադրվելով գնալ Դերբենդ մանրավաճառի խանութ բանալու համար։ Քահանան յայտնում է եւ գաղտնիքը ամենքին։ Սկսվում է սակարկութիւն. անծանօթները առաջարկում են հազար ռուբլի, իսկ քահանան իր հիւրերով աղաչանք, պաղատանք են անում եւ վերջապէս համոզում են 750 ռուբլով։ Այդ գումարից՝ չորս հարիւր ռուբլի տալիս է խեղճ Առաքելը, իսկ մնացորդը տանուտէրի եղբայր՝ Բէհբութը։ Ճարպիկները, փողերը ստանալով, հեռանում են իսկոյն, յայտնելով մարդկանց, թէ մի տոպրակ էլ այդ «ոսկուց» ունին, գնան բերեն, բայց այդ գնով չեն տայ։ Ճարպիկները վերցնում են հեռները եւ խորհրդաւոր անդուկի բանալին եւ... հեռանում են։ Համբերութիւնից հատած քահանան իր հիւրերով երկար սպասելուց յետոյ, ճարահատեալ կոտրում են անդուկը, որի մէջ փոխանակ դեղին ոսկիների գտնում են սեւ կօպէկանոցներ եւ մանր քարեր. իսկոյն ճանապարհվում են խաբեբաների ետեւից, քահանան—Բալաջար, իսկ Առաքելն ու Բէհբութը—Դերբենդ. բայց ուր. խաբեբայ չարագործները անյայտացած են լինում. «Іоманай какъ звали»...

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Ծննդեան երեկոյին Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեան մի համառօտ քարոզ ասաց երկրաշարժից վնասվածների մասին»։

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Նաւթի ցած գնները ազդել են նաեւ Բագուի ամբողջ առեւտուրի վրա. ամենքն էլ գարգատվում են, որ առեւտուրը պակասել է, փող չը կայ. միայն Բագուի ժողովարանն ու Նիկիտինի ցերկն են, որ կազմում են երջանիկ բացառութիւն։ Ժողովարանում շատ անգամ ազատ տեղն չէ լինում թուղթ խաղացողների համար, իսկ ցերկում՝ երկու-երեք օր ստացուց են ստորագրվում տոմսակների, որպէս զի բախտ ունենան Դուրսվին տեսնելու»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ամսիս 13-ին Մեղրեցոց եկեղեցում կայացաւ ծխականների երկրորդ ժողովը, նոյն եկեղեցու համար երէցփոխ ընտրելու։ Ձայների մեծամասնութեամբ ընտրվեց Եւլախի կօմիսիօներ Յակոբը Պետրոսեան, մի մարդ, որ յայտնի է ամենքին։ Բայց ուրախ ենք, որ վերջապէս երեք ամիս տեղի ունեցած խռովութիւնները եւ բողոքները կը վերջանան։ Նոր երէցփոխը տէր-Խորէնի թեկնածուն է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

—

Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը որոշել է վերակազմել Թիւրքիայում գոյութիւն ունեցող որբանոցները, դարձնելով նրանց արհեստանոցներ։ Պատրիարք Օրմանեան հրատարակել է հետեւեալ կանոնները.

Հրահանգ կազմակերպութեան գաւառական ազգային արհեստանոցներու

ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

Յօդ. 1.—Գաւառական առժամանակեայ որբանոցներու տեւողութեան պայմանաժամին լրանալովը՝ տակաւին անչափահաս գտնուող որբ եւ կարօտ մանուկներն իսպառ անխնամ չը թողլու համար ազգային պատրիարքարանի կողմէ առաջնորդական գլխաւոր կենդրոններու մէջ՝ ուր որ յարմար դատուի, երկու սեռի տղոց համար՝ ուրոյն արհեստանոցներ պիտի հաստատուին։

Յօդ. 2.—Այս արհեստանոցներու ընդհանուր հասոյթներն են,—1) Կայսերական կառավարութեան կողմէ կարօտ մանկանց համար զանազան առիթներով շնորհուած նպաստ.—2) Բարեսէր ազգայնոց կողմէ տրուած տարեկան այն կամաւոր նուէրն, զոր սրբազան պատրիարքն ամէն տարի ս. Ծննդեան տօնին առթիւ կատարեալ ուղղակի՝ մասնաւոր կերպերով դիմելով անոնց։—3) Բարերարներու նուիրած եւ սահմանած գումարները՝ որբերը որ եւ է կերպով հոգալու համար։ 4) Կտակաւ թողուած ու այլ եւ այլ միջոցներով ստացուած պատահական նուէրներ։—5) Գաւառական ազգային վարչութեանց եւ Թաղական խորհրդոց կողմանէ հայթայթուած նպաստներ։—6) Վանքերու տրամադրելի հասոյթներ եւ մանաւոր սանատէրներու նպաստն, արհեստանոցներու յատուկ։—7) Եւ վերջապէս արհեստանոցներու արտադրած վաճառքներու զուտ շահն։

Յօդ. 3.—Արհեստանոցներու հասոյթներն կամփոփուին ու կը պահուին պատրիարքարանի նպաստից մնացուկին մէջ, որ կը գտնուի արդէն ս. պատրիարքին պահպանութեան ներքեւ։

Յօդ. 4.—Արհեստանոցք կը հաստատուին ժամանակ՝ երբ տրամադրելի բաւականաչափ հասոյթներ գոյանան, կամ բարերար մը մանաւոր կարգադրութեամբ կամ առաջնորդարանի վիճակ մը տեղական միջոցներով ստանձնէ նոցա ծախքը, առանց պարտք ծանրաբեռնել առաջնորդարանին վրայ։

Յօդ. 5.—Այս արհեստանոցներու կազմութեան նպատակն է մասնաւորապէս որբ եւ անտէրունչ մանուկները խնամարկել, եւ ընդհանրապէս՝ թէ այս կարգի պատասպարեաներու, թէ ուրիշ գաւառացի տղայոց ըստ տեղւոյն օգտակար արհեստներ եւ հողագործական կրթութիւններ սովորեցնել եւ միջոց ձեռնել անոնց, որ անձնական աշխատութեամբ հոգան իրենց ապրուստն, եւ ըլլան բարի օգտակար անդամներ պետութեան եւ ազգին։

Յօդ. 6.—Որբ եւ անտէրունչ տղաքներէն որոշեալ թուով մաս մը գիշերօթիկ կընդունուի, որու 3/4-ը կառնուի վիճակին թեմերէն եւ 1/4-ը ըստ կարգադրութեան պատրիարքարանի ուրիշ կարօտեալ վայրերէն. իսկ ցերեկեայ կը դունուին այն տղաքներն, որք արհեստանոցի քաղաքին մէջ բնակութիւն ունին։

Եթէ փակուած որբանոցներէ եկող տղաքի մէջ կան այնպիսիք, որ տակաւին կը կարօտին պաշտպանութեան եւ որ եւ է արհեստ չեն կրցած սովրիլ, կը զետեղուին պատրիարքարանի որոշմամբ՝ յարմար արհեստանոցներու մէջ։

Յօդ. 7.—Արհեստանոցք կը հաստատուին յարմար վայրերու ու չէնքերու մէջ եւ, որչափ հնար է, եկեղեցիին մօտ։

Յօդ. 8.—Գիշերօթիկ տղաք որոշեալ ժամանակներու մէջ կերթան տեղւոյն ազգային դպրոցն, նախնական ուսումն ընդունելու, եւ մնացեալ ժամանակներ կաշխատին արհեստանոցին մէջ։

Մատակարարութիւն

Յօդ. 9.—Գաւառական արհեստանոցք կը մատակարարուին յատուկ հոգաբարձութեանց ձեռքով, որք վիճակին առաջնորդին կամ տեղապահին նախագահութեամբ ներքեւ կը բաղկանան հինգ անդամէ, որոց մին քահանայ պէտք է լինի, իսկ անդամոց երկուքը քահանայ կը լինին, եւ մէկ աղջկանց յատուկ է արհեստանոցն։

Հոգաբարձութեանց անդամք պիտի լինին իրենց ուղղութեամբ եւ պատասխանատուութեամբ ծանօթ անձեր, ըստ բաւականին բարեկեցիկ վիճակի մէջ, եւ դատապարտութեան ներքեւ չինված։

Յօդ. 10. — Հոգաբարձութիւնք կընտրուին պատրիարքարանէն՝ ընտրելեաց երկպատիկ ցանկի մը վրա, զոր առաջնորդն յայտագրով մը կը ներկայացնէ, գաւառական վարչութեանց հետ համախորհուրդ, տալով կարեւոր ծանօթութիւններն ընտրելեաց նկատմամբ։ Սակայն պատրիարքարանն կրնայ նոյն ցանկէն դուրս անձեր ալ ընտրել։

Յօդ. 11.—Հոգաբարձութիւնք կը պարտաւորին մատակարարել արհեստանոցն որոշեալ եղանակներու մատակարարել արհեստանոցն որոշեալ եղանակներու մատակարարել արհեստանոցն որոշեալ եղանակներու

... այլ ինչ անմիջապէս հաղորդել հոգաբարձութեան։

Յօդ. 16.—Հոգաբարձութեանց անդամք ոչ միայն անձինն եւ ոչ ալ առանց նախագահի չեն կարող գործեր մնօրինել կամ հրահանգներ տալ հաստատութեան պաշտօնէից, այլ կը պարտաւորին խորհրդակցութեամբ տալ որոշումներն, որոնք գրանցուելով ատենագրութեան մէջ, եւ նախագահին միջոցաւ գործադրութեան դնել։

Յօդ. 17.—Հոգաբարձութեանց պաշտօնն երեք տարի կը տեւէ։ Պատրիարքարանն իրեն կը վերապահէ վերահաստատել զանոնք, երբ յարմար դատի։

Յօդ. 18.—Հոգաբարձութիւնն կամ անդամներէն ոք երբ թերանայ իր պաշտօնին մէջ եւ գործումներ գործէ, պատրիարքարանը իրողութիւնը ստուգելէ ետքը՝ կը դադրեցնէ զայն պաշտօնէ։

Արհեստական կրթութիւն

Յօդ. 19.—Արհեստանոցներու մէջ յատուկ մենակներ պիտի յատկանան, իրենց կարեւոր կազմածքով, ուր տղայք՝ գիշերօթիկ եւ ցերեկեայ՝ որոշեալ ժամերու մէջ պիտի պարապին արհեստ սովորելու, մասնագէտ վարպետներու միջոցաւ։

Յօդ. 20.—Արհեստներու տեսակն եւ որքութիւնը հոգաբարձութիւնը կը սահմանէ ձեռնհաս անձերու հետ խորհրդակցելով, եւ պատրիարքարանի որոշման ենթարկելէ ետքը՝ կը սկսի գործադրութիւնն։ Հոգաբարձութիւնք կը պարտաւորուին նիւթական միջոցներու նեղած չափով ընտրել այնպիսի արհեստներ, որոց արտադրութիւնը ոչ միայն տեղական սպառմանց յատուկ լինին, այլ եւ ուրիշ տեղեր արտածուելով՝ կարենան շահու աղբիւր մը դառնալ ժողովրդեան։

Յօդ. 21.—Պատրիարքարանն կը սահմանէ՝ հոգաբարձութեանց յայտագրին վրա՝ արհեստական ճիւղին նիւթական պիտոյից համար յատուկ դրամագլուխ մը։ Այս դրամագլուխը անկորուստ պէտք է պահուի, իսկ արտադրութեանց վաճառումէն գոյացած շահուն կէսը կը կցուի դրամագլխին եւ միւս կէսը կը պահուի, երբէք մէկ նպատակ տրուելու համար արհեստաւոր կարօտ տղոց՝ իրենց արհեստին վերաբերող գործիքն գնելու համար, երբ արհեստն ապրելով գործելու կենին։

Յօդ. 22.—Հոգաբարձութիւնք կը պարտաւորին արհեստանոցներու նիւթական պիտոյից համար զատ հաշիւ բռնել պատրիարքարանի կողմէ ցոյց տուած դրութեամբ ու ամէն երեք ամիս՝ հաշուեցոյցն հաղորդել պատրիարքարանի, տարին մի անգամ ղրկելով նաեւ արտադրութեանց նմոյշներն, անոնց իսկական ծախսուց հաշուեգրովը։

Յօդ. 23.—Հոգաբարձութիւնք կրնան արհեստարաններու մէջ պատրաստելի վաճառքներու համար ուղղակի յանձնարարութիւններ ընդունել եւ գործադրել, պատրիարքարանի յայտարարելով ի տեղեկութիւն։

Յօդ. 24.—Արհեստաւարտ տղոց տեղ անմիջապէս նորերն կառնուին եւ մեկնողներու անունները կը ծանուցուին պատրիարքարանի կարեւոր պարագաներով։

Յօդ. 25.—Արհեստանոցի աշակերտաց մէջ եթէ գտնուին այնպիսիք, որ գերազանց արհեստի ընդունակութիւն ցոյց տան ու ապագայ խոստանան, հոգաբարձութիւնը կը յայտարարէ անոնց անունը պատրիարքարանի, որ զանոնք կը ղրկէ ուր որ անկ է, կատարելագործելու համար իրենց արհեստ, եթէ նիւթական միջոցները ներեն։

Յօդ. 26.—Հոգաբարձութիւնք կը պարտաւորին ուսումնասիրել այն միջոցներն, որոնցով հնարին կրնայ լինիլ գիւղացի ժողովրդեան երկրագործական աշխատութիւններն արդիւնաւորել եւ հողին տեսակին ու կլիմային համաձայն՝ նահանջ բերքերու մշակութիւնը քաջալերել որպիսիք են, ափիոն, բամպակ, թթենի (շերամի), շուշմայ, կտաւատ, կանեփ, եւ ամէն տարի ուրոյն տեղեկագրով մը ներկայացնել պատրիարքարանի իրենց ուսումնասիրութեան արդիւնքը եւ տեղւոյն առեւտրական գործոց վիճակը, որպէս զի կարելիութեան սահմանին մէջ պատրիարքարանի կողմէ ընծայուին կարեւոր դիւրութիւններն՝ հողագործական աշխատութեանց արդիւնաւորման համար։

Յօդ. 27.—Այդ նպատակաւ հողագործական վարժութիւնք տեղի պիտի ունենան արհեստանոցներու մէջ, եւ այն պարագային մէջ, երբ յարմարութիւն չը գտնուի, տեղւոյն մօտակայ վանքերու հողերն ու արտերն այդ նպատակին պիտի գործածուին՝ յատուկ կարգադրութեամբ։

Նպաստից յանձնաժողովոյ հետ խորհրդակցութեամբ կազմուած եւ հրատարակուած ի գործադրութիւն։

Ի պատրիարքարանի, 20 Նոյեմբերի 1901.

Պատրիարք Կոստանդնուպոլսոյ

Մաղաքիա Արքեպիսկոպոս

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Անցեալ անգամ, հիմնուելով Կ. Պոլսի «Սուրհանդակ» լրագրի հաղորդած լուրի վրա, մենք յայտնեցինք, որ Կիլիկիայի կաթողիկոս ընտրուած Գէորգ եպիսկոպոս Երիցեանը հրաժարուել է ընդունել այդ պաշտօնը։

Ինչպէս երեւում է վերջերս հասած թերթերից, այդ հրաժարականի խնդիրը լուծուած է համարուում եւ նորընտիր կաթողիկոսը յետ է առել հրաժարականը, որովհետեւ նա դիմել է Երուսաղէմի Ցարութիւն պատրիարքին, խնդրելով, որ մի այլ անձն ուղարկեն Կ. Պոլիս, փոխարինելու իրան Երուսաղէմի պատրիարքական փոխանորդի պաշտօնում։ Մնում է այժմ, որ թիւրքայ կառավարութիւնը հաստատէ Երիցեանի ընտրութիւնը, որից յետոյ նա կը գնայ Ադանա եւ օծումն ընդունելով, կը ստանձնէ կաթողիկոսական պաշտօնը։ Դրանով, ի հարկէ, վերջ կը տրուի այն հարցին, որ ահա վեց տարի է յուզուում է եւ յուզուում է ի վնաս Կիլիկիայի մօտ 200,000 հայ ազգաբնակութեան, որովհետեւ կաթողիկոսի բացակայութիւնը ահագին կազմալուծումն է առաջ բերել վիճակի բոլոր գործերում։ Մի եռանդուն, գործունեայ, լուսաւոր հովուապետ, մանաւանդ Կիլիկիայի հայերի այժմեան թշուառ վիճակում, կարող է ահագին օգուտներ տալ, սփոփել հոգեպէս եւ բարոյապէս ժողովուրդը, նպաստել կրթական գործի բարգաւաճմանը։ Եւ Գէորգ I (այդպէս են արդէն կոչում նրան Կ. Պոլսի լրագիրները) կաթողիկոսի առաջ, ինչպէս նկատում է «Մասիս» լրագիրը, մեծ ասպարէզ կայ բացուած։ «Կաթողիկոսական այն աթոռը, ասում է այդ շաբաթաթերթը, որուն աթոռակալ ընտրեցին իրեն, որքան ալ այժմ մասնաւոր շրջանակի մը հայրապետութիւնը միայն կը պարուսակէ, բայց չը դադրեր ըլլալէ մի եւ նոյն ժամանակ հայ եկեղեցւոյ նուիրական աթոռներէ մինը, քանի որ ոչ միայն Շնորհալիի պէս հայրապետներ բազմած են անոր վրա, այլ եւ վանզի բազմաթիւ հայ ժողովրդեան կրօնական, բարոյական, իմացական ու կրթական զարգացման կեդրոն մըն է, որուն տալիք հոգեւոր ներշնչումը ու մղումը զգալի կերպով պիտի նպաստէ իր թեմականներուն առաջդիմութեան դէպի հաւատոյ եւ բարոյական վերաշինութեան ճամբան, որուն ամբաստ պէտք ունի տարիներէ ի վեր անհովիւ մնացած այդ հօտը»։ Ապագան ցոյց կը տայ, թէ Գէորգ եպիսկոպոս Երիցեան որքան կարգարացնէ այդ յոյսերը։

Հ. Ս.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Կոպէնհագէնից ստացուած տեղեկութիւններով՝ Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Լուբէ, Ռուսաստանից վերադառնալու ժամանակ, կայցելէ Դանիայի մայրաքաղաքը։ Բացի սրանից՝ արտասահմանեան լրագիրները հաղորդում են, իբրեւ լուր, թէ գերմանական կառավարութիւնը առաջարկում է ֆրանսիական կառավարութեանը նախագահի ուղեւորութեան ծրագիրը կազմել այնպէս, որ ֆրանսիական նաւատորմը անցնի Կիլի ջրանցքով։ Գերմանական կառավարութիւնը իբր թէ ցանկութիւն ունի օգուտ քաղել այս հանգամանքից եւ Վիլհելմ կայսրի ու նախագահ Լուբէի տեսակցութեան համաձայնութիւն ստանալ Ֆրանսիայից։

—Մօտ օրերումս Ֆրանսիական պատգամաւորների ժողովը ընդունեց հասարակական աշխատանքների մինիստրութեան եւ զանազան մասնագիտական յանձնաժողովների մշակած հսկայական ծրագիրը նոր ջրանցքների շինութեան եւ այժմ գոյութիւն ունեցող ջրային ճանապարհների ու նաւահանգիստների բարւոքման մասին։ Այդ աշխատանքները Ֆրանսիայի վրա կը նստեն 660 միլիոն ֆրանկ։ Այն արագութիւնը, որով ընդունվեց այսպիսի կարեւոր եւ թանգ արժեցող նախագիծը,—նա ընդամենը գրաւեց երկու նիստ,—եւ ձայների այն մեծ թիւը, որ տրվեց յօդուտ նախագծի,—491 ձայն ընդդէմ 48-ի,—բացատրվում են ոչ միայն նրանով, որ պատգամաւորները կամենում էին հաճոյանալ ընտրութիւններից առաջ իրանց ընտրողներին, սկիզբն դնելով մի գործի, որ վաղուց սպասում էր իր հերթին, այլ եւ նրանով, որ այդ հսկայական ձեռնարկութիւնը յիրաւի մի համազգային գործ է ֆրանսիացիների համար։ Նաւարկութեան համար պիտանի նոր ջրանցքների շինութեան ծրագիրը վաղուց արդէն նախապատրաստվում էր՝ համաձայն այն բազմաթիւ միջնորդութիւնների, որ յարուցել են դէպարտամէնտական խորհուրդները։ Նախագիծը քննվում եւ ուսումնասիրվում էր մի քանի միտնպատութիւնների օրով, որոնք խորհրդակցութեան էին հրաւիրում նշանաւոր մասնագէտներ։ Վալդէկ-Ռուսսոյի մինիստրութիւնը վերջացրեց նախապատրաստական աշխատանքը եւ ներկայացրեց պատգամաւորների ժողովին համապատասխան նախագիծ։ Համաձայն այս նախագծի՝ մօտ 443½ միլիոն ֆրանկ պէտք է ծախսվի նոր ջրանցքների շինութեան վրա։ Այս գումարից 130 միլիոն ֆրանկ նշանակված է փորելու համար մի ջրանցք, որ միացնէր Պա-դէ-Կալէի ածխային շրջանը Լօտարինգիայի հետ, 123 միլիոն-մի այլ ջրանցքի համար, որ պէտք է միացնէ Լուարա գետը Ռոնայի հետ, 60 միլիոն—Հիւսիսային ջրանցքի համար եւ 91½ միլիոն մի ջրանցքի համար Մարսէլի եւ Ռոնայի միջեւ։ Մնացած գումարը պէտք է ծախսվի այժմեան ջրանցքները եւ նաւահանգիստները կարգի բերելու վրա։ Վերջին նաւահանգիստների թւումն են Դիւնկիրկէն, Հավր եւ Նանտ։

—«Giornale d'Italia» լրագիրը անցեալ շաբաթ տպագրել էր Պարիզի իր թղթակցի մի յօդուածը, որի մէջ նա նորից դրականապէս պնդում է, թէ Իտալիայի եւ Ռուսաստանի մէջ գոյութիւն ունի անդիր համաձայնութիւն Բալկանեան թերակղզու վերաբերմամբ։ Թղթակիցը հաւատացնում է, թէ չի անցնի նոյն իսկ մի տարի, որ նրա հաղորդածը կը հաստատվի լիովին։ Օտարերկրեայ լրագիրները ուշադրութիւն են դարձնում այն հանգամանքի վրա, որ իտալական կառավարութիւնը չէ շտապում հերքելու այս լուրերը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 22-ին կայացաւ երկրորդ պարահանդէսը Զմեռային պալատում. հազարից աւելի մարդիկ էին հրաւիրված։ Գիշերվայ երրորդ ժամին պարահանդէսը, որ աչքի էր ընկնում իր չափազանց կենդանութեամբ, վերջացաւ։

ՎԱՐՇԱՎԱ։ Բարձրագոյն դպրոցների ուսանողներին բաժանվում են ուսանողական կազմակերպութեան վերաբերմամբ մինիստրութեան մշակած ժամանակաւոր կանոնները։ Տեղի ունեցաւ անասնաբուժական ինստիտուտի ուսանողների ընդհանուր ժողովը, որը վճռեց կազմել ընթերցարան, գրադարան եւ փոխադարձ օգնութեան դրամարկղ եւ ենթարկել ժամանակաւոր կանոնները գոյութիւն ունեցող էժան ճաշարանը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Կօկրէն առաջարկեց ներկայացուցիչների ժողովում՝ հրաւիրել նախագահ Կրիւգէրին Միացեալ-Նահանգները, ուր նա կը վայելէ տեղափոխութեան կատարեալ ազատութիւն։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովը ընդունեց օրինագիծ՝ միամեայ ծառայութեան իրաւունքը տարածելու մասին գեղարուեստական եւ արդիւնաբերական դպրոցների աշակերտների վրա։ Առեւտրի մինիստրութեան բիւջէի մասին ընդհանուր վիճաբանութիւնների ժամանակ, Մելիերան նկատեց, որ առեւտրի եւ արդիւնաբերութեան դրութիւնը Ֆրանսիայում գոհացուցիչ է։

ԲՐԻՒՍԷԼ։ Լէյդս ճանապարհ է ընկնում առաւօտեան Ուտրէխտ՝ Կրիւգէրի մօտ։ Օրանժեան հանրապետութեան պատուիրակ Ֆիշէր նոյնպէս այնտեղ գնաց երէկ երեկոյեան։

ՀԱԱԳԱ։ Բօէրական պատգամաւորութեան անդամը, որը հոլլանդական յայտագիրը եւ Անգլիայի պատասխանը հրատարակելուց յետոյ խօսակցեց մէկ թղթակցի հետ, յայտնեց, որ շնորհակալութեամբ ողջունում է հոլլանդական կաբինէտի ջանքը, որ ապացուցանում է, թէ հարաւ-ափրիկական ժողովրդի տանջանքները հակակրութիւն են առաջացնում։ Նա շատ բարեացակամ է համարում Անգլիայի պատասխանը։ Այդ պատասխանը ապացուցանում է, որ անգլիական կառավարութեանը օտար չէ արդարութիւնը, եւ որ դա առիթ է տալիս բանակցութիւնների սկզբնաւորութեան, ենթադրելով, որ աւելի ուշ, եթէ բօէրական պատուիրակները կը սկսեն գործել անգլիական պատասխանի ոգու համեմատ, Անգլիան այնպիսի պայմաններ չի առաջարկի, որոնք չեն կարող ընդունվել։

ՊԱՐԻԶ։ Լուրջ լրագիրները շարունակում են ուրախութիւն յայտնել այն հանգամանքի առիթով, որ սոցիալիստները, հակառակ իրանց ցանկութեան, առաջացնում են պատգամաւորների ժողովում մեծ համակրական ցոյցեր Ռուսաստանի եւ ֆրանս-ռուսական դաշնակցութեան վերաբերմամբ։ «Temps» եւ «Journal des Débats» լրագիրները նուիրում են այսօր մեծ յօդուածներ այդ երեւոյթին։ «Temps» ասում է, թէ սոցիալիստների միջամտութիւնը էլի մի անգամ ցոյց տուեց մեր դաշնակցութեան ամրութիւնը Ռուսաստանի հետ, որովհետեւ երէկվայ քուէարկութիւնից առաջ արդէն երեւացին ժողովրդի մեծամասնութեան զգացմունքները նահանգական խորհրդների կողմից յայտնված ցանկութիւնների մէջ։ «Journal des Débats» գտնում է, որ սոցիալիստ յեղափոխականները, կամենալով ցոյց անել դաշնակցութեան դէմ, առաջացրին պատգամաւորների ժողովում ազգու հակացոյց ինքնաստ դաշնակցութեան։

ՊԱՐԻԶ։ Վերջին Ֆրանս-ռուսական ցոյցերի պատճառով եղած ծախքերի կրէդիտի հաստատումը պատգամաւորների ժողովի կողմից այսօր լրագիրների մէջ բացատրվում է շատ բարեյաջող մտքով։ «Figaro» ասում է, թէ այդ փաստը առիթ տուեց ահագին մեծամասնութեամբ նորից հաստատելու Ռուսաստանի վերաբերմամբ Ֆրանսիայում տածվող համակրանքը։ «Petit P.» լրագիրը խօսում է այսպէս. «Կրէդիտի համարեա միաձայն հաստատումը ապացուցանում է մեր երկրի հաւատարիմ լինելը այն միջազգային համաձայնութեանը, որ մեր քաղաքականութեան հիմքն է կազմում եւ այն գլխաւոր գործօնն է, որ ապահովում է համաշխարհային խաղաղութիւնը։ Շնորհիւ երկու ազգերի մէջ գոյութիւն ունեցող դաշնակցութեան եւ բարեկամութեան՝ եւրոպական հաւասարակշռութիւնը պահպանվում է նրանց զինուորական ոյժերով ցամաքի եւ ծովի վրա, որովհետեւ Ռուսաստանի եւ Ֆրանսիայի դաշնակցութիւնը խաղաղ նպատակ ունի»։

ՎԻԵՆՆԱ։ Էրցհերցոգ Ֆրանց-Ֆերդինանդ Պետերբուրգ կը հասնի 25-ին եւ այնտեղ կը մնայ մինչեւ յունվարի 29-ը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ռուսական դեսպան Կասինի յայտնեց երէկ երեկոյեան, թէ սպանս-ամերիկական պատերազմից առաջ, նրա ժամանակ եւ նրանից յետոյ, Ռուսաստանը պահպանում էր անպայման օրինական, չեզոք եւ բարեկամական վերաբերմունք դէպի Միացեալ-Նահանգները։ Պատերազմի սկզբից անմիջապէս առաջ՝ նա Վաշինգտօնում չէր, բայց սկսվելուց յետոյ նա գնաց այնտեղ. նա գիտէր այն ամենը, որ որ եւ է տեղում յայտնի էր դառնում դիպլոմատիական շրջաններում պատերազմի վերաբերմամբ եւ ամենայն ուշադրութեամբ կարդում էր այս մասին տեղի ունեցած գրագրութեան ամեն մի տողը, առանձնապէս ի նկատ առնելով այն պնդումները, թէ Աւստրօ-Ունգարիային ցանկալի է ճնշումն գործ դնել Միացեալ-Նահանգների վրա եւ թէ նրա ետեւում կանգնած են Ֆրանսիան, Գերմանիան եւ Ռուսաստանը։ Այդ պնդումների մէջ, որքան այդ վերաբերում է Ռուսաստանին, ոչ մի ճշմարիտ բան չը կար։

ՎԱՐՇԱՎԱ։ Փետրվարին մտադրութիւն կայ բանալ փոխադարձ օգնութեան նոր դրամարկղ աշխատաւոր կանանց համար։

Ամառնային կօլօնիաների ընկերութեան միջոցները մեծացնելու համար տեղական բժիշկները կազմակերպում են մի շարք դասախօսութիւններ։

24 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Յունվարի 23-ին Թագաւոր Կայսրը, Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնա, Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնա, Գահաժառանգը եւ Մեծ Իշխաններն ու Իշխանուհիները այցելեցին ձկնորսական միջազգային ցուցահանդէսը։ Շատ բաժանմունքներում Նոցա Մեծութիւնները ընդունում էին նուէրներ էկսպոնենտներից։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել հաստատել առանձին խորհրդակցութիւն գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքների մասին 1) բացատրելու գիւղատնտեսական արդիւնաբերութեան կարիքները, գտնելու միջոցներ՝ ուղղված այդ արդիւնաբերութեան եւ նրա հետ կապված ժողովրդական աշխատանքի ճիւղերի օգտին, կազմակերպել առանձին խորհրդակցութիւն ֆինանսների մինիստրի նախագահութեամբ երկրագործութեան եւ ներքին գործերի մինիստրներից ու ուրիշ անձերից Նորին Կայսերական Մեծութեան անմիջական ընտրութեամբ. 2) իրաւունք տալ առանձին խորհրդակցութեան նախագահին հրաւիրել, խորհրդակցական ձայնի իրաւունքով, մասնակցելու նրա զբաղմունքներին բոլոր այն անձանց, որոնց կարծիքը օգտակար կը նկատվի եւ 3) թոյլ տալ խորհրդակցութեան կազմել նախապատրաստական յանձնաժողովներ։ Գիւղատնտեսական արդիւրաբերութեան կարիքների համար կազմված առանձին խորհրդակցութեան գործավարութիւնը յանձնված է ֆինանսների մինիստրի ընդհանուր գիւանատան վերատեսուչ Շիօլովին։

Գիւղատնտեսների ժողովում որոշված է կազմել յանձնաժողով ձեռնհաս անձերից՝ լուսաբանելու Ռուսաստանի հիւսիսի կարիքները եւ նրա բնական հարստութիւնները աւելի նպատակայարմար եւ բազմակողմանի կերպով շահագործելու համար։

Ռուսաց Կայսերական աշխարհագրական ընկերութեան տարեկան ժողովում, որ տեղի ունեցաւ յունվարի 23-ին, կարդացվեց հաշիւ, որից երեւում է, որ աւարտված են ընկերութեան երեք խոշոր արշաւախմբերի ճանապարհորդութիւններ, — Ն. Խ. Զարուդնիի— արեւելեան Պարսկաստանում, Պ. Ի. Շմիդտի—հեռու Արեւելքում, կենդանաբանական հետազօտութիւնների համար—Եապօնական ծովում, Խաղաղ ովկիանոսում եւ Թիբէթեան՝ Պ. Կ. Կոզլովի առաջնորդութեամբ։

ՄՕՍԿՎԱ։ Էկսպօնատների ժողովելը համառուսական տնայնագործական ցուցահանդէսի համար Տավրիկեան պալատում աւարտված է. Մօսկվայի 400 տնայնագործներ ուղարկել են ցուցահանդէսը 3,500 էկսպօնատներ։ Նիժնիյ-Նովգորոդից տնայնագործական թանգարանը ռուսական ստիլով քանդակների խոշոր պատուէր է ստացել։

ՕԴԵՍՍԱ։ Փետրվարի 2-ին, Գլինկայի մահվան 45-ամեայ տարեդարձի օրը, գրական-արտիստիական ընկերութիւնը, ի յիշատակ ռուս հանճարեղ երաժշտագէտի, երաժշտական մեծ երեկոյթ է կազմում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բագու շաբաթը մէկ անգամ հինգշաբթի օրերը դուրս է գալիս ցերեկվայ 2 ժամ 32 ր. (3 ժ. 30 ր.), հասնում է Բագու գիշերվայ 3 ժամ 58 ր. (4 ժ. 56 ր.)։

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս չորեքշաբթի օրերը երեկոյեան 10 ժ. 41 ր. (11 ժ. 39 ր.) հասնում է Թիֆլիս ցերեկվայ 12 ժ. 47 ր. (1 ժ. 45 ր.)։

Պօստատար գնացք Բագուից դուրս է գալիս գիշերվայ 12 ժ. 2 ր. (1 ժամին), հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 24 ր. (7 ժ. 22 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 54 ր. (8 ժ. 52 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 8 ժ. 33 ր. (9 ժամ 31 ր.)։

Մարդատար գնացք Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 3 ժ. 35 ր. (4 ժ. 33 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 8 ժ. 50 ր. (9 ժ. 48 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 9 ժ. 28 ր. (11 ժ. 26 ր.)։

Պօստատար գնացք Բաթումից դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 10 ժ. 45 ր. (11 ժ. 43 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 11 ժ. 47 ր. 12 ժ. 45 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 33 ր. (7 ժ. 31 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 8 ժ. 58 ր. (9 ժ. 56 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 8 ժ. 33 ր. (9 ժ. 31 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 9 ժ. 36 ր. (10 ժ. 34 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 2 ժ. 12 ր. (3 ժ. 10 ր.)։

Պօստատար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 10 ժ. (10 ժ. 58 ր.). հասնում է Ղարաքիլիսա առաւօտեան 5 ժ. 4 ր. (6 ժ. 2 ր.), Ալէքսանդրոպոլ 8 ժ. 37 ր. (9 ժ. 35 ր.), Կարս ցերեկվայ 12 ժ. 23 ր. (1 ժ. 12 ր.)։

Պօստատար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 12 ր. (5 ժ. 10 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ 7 ժ. 40 ր. (8 ժ. 38 ր.), Ղարաքիլիսա գիշերվայ 11 ժ. 6 ր. (12 ժ. 4 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 47 ր. (7 ժ. 45 ր.)։

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 12 ժ. 30 ր. (1 ժ. 28 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 5 ժ. 12 ր. (6 ժ. 10 ր.) և Ղարաքիլիսա երեկոյեան 7 ժ. 19 ր. (8 ժ. 17 ր.)։

Խառն գնացք Ղարաքիլիսայից դուրս է գալիս առաւօտեան 11 ժ. 45 ր. (12 ժ. 43 ր.), հասնում է Սանահին ցերեկվայ 1 ժ. 30 ր. (2 ժ. 28 ր.) և Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 8 ր. (7 ժ. 6 ր.)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Դզելիով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Դոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մարթու հ.
Ա. Ն. Ցեպակովակի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ), վեներ. և մարթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ռ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Օ. Տ. Առաքելեանի—տանը. ծաղկահատ և բուժական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ՑՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ
հրատարակութեամբ լոյս տեսան
Ե. ԹՈՓՉԵԱՆԻ
կազմած հետեւեալ պատկերազարդ կենսագրութիւնները՝

1) «Բէօրնսօն» . . . 10 կոպ.
2) «Մեսրոպ Մաշտոց»։ 5 »
3) «Մահմէդ». . . . 7 »

Շուտով լոյս են տեսնելու նոր կենսագրութիւններ։

Դիմել՝ С.-Петербургъ: Ивану Арамянцъ, Ямская, 38. Тифлисъ: С. Абрамяну, Сергіевская ул., контора Арамянцъ. Баку: Г. Іоаннисянцу, контора Манташева. (կ.) 4—5

ԵՐԿՐԱՉԱՓ ԻՆԺԵՆԵՐ
Ս. ԲԱՀԱԹՐԵԱՆ
Ընդունում է երկրաչափական եւ հարթաչափական (нивеллировочныя) եւ այլ տեսակ գէօդէզիական աշխատութիւններ՝ ջուր մատակարարելու, կանալիզացիայի, ոռոգման, ճահիճներ ցամաքացնելու, անտառների բարեկարգութեան, լեռնային գործի, ճանապարհների եւ փողոցների չինութեան եւ կանոնաւորութեան, քաղաքային եւ այլ անշարժ կալուածքների կարգաւորութեան, յատակագծի վրա գնահատական (оцѣночный сборъ) տուրքի համար, քաղաքային եւ այլ հողերի որոշումը, քաղաքային յատակագծի հաստատելը օրէնսդրական կարգով եւ այլն։
ԲԱԳՈՒ, «Դվօրցովայա Նօմէրներ» հիւրանոց. կամ Թիֆլիս՝ Ավճալեան փողոց, Շահբուդաղեանի տուն, № 59, բակում։
58—100

ԱՏԱՄՆԱԲՈՅԾ
Օր. Սաթենիկ
ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ
Առաւօտեան ժամը 9—2
Երեկոյեան ժամը 5—7
Վանքի մեծ փողոց, տուն Մարգարեանցի։
(հ. կ.) 33—60

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ։ Մեծ արկղիկը 5 ռուբլի, փոքրը—3 ր. եւ 1 ր. 50 կ.։

ՆՈՐ ՄԻՋՈՑ
մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց
ԶՈՒԻ ԿԱԹԸ
երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կայուն քնքշութիւն եւ սպիտակութիւն։ Այդ գները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 ռուբլի, փոքրը—1 ր. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինեան փողոց, տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում՝ Կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց եւ Բագուում. նաեւ Միքայէլեան կամուրջի վրա, Պօղովի եւ Ենրիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս պօստով։ 29—100

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են՝
ԹՈՌՈՍՅԵԱՆՑ Ս., բնագրից ամփոփեց, «Վիլհելմ Տելլ»՝ Շիլլերի, Թիֆլ. 1901 թ. գ. 15 կ.
ՑՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ ՏԻԳ., թարգմ., «Ցարութիւն», վէպ, Լ. Տոլստոյի, Թիֆլ. 1902 թ. գ. 1 ր. 50
» «Ֆրօմեն կրտսեր եւ Ռիսլէր աւագ», վէպ, Ալ. Դօդէի, Թ. 1902, գ. 1
ՏԷՐ-ԱՄԱՏՐԵԱՆ Գ., «Հայազգի գործիչների գեղարուեստական ալբօմ»—32 մեծ. պատկեր—3
ՏԷՐ-ՄԻՐԵԼԵԱՆ Ա., «Ցաճախապատում ճառք ս. Գրիգորի Լուսաւորչի»—1 ր.
«Պատմութիւն Սաթաբել վարդապետի Դաւրիժեցւոյ, գ. տիպ—2 ր.
ՓԼԵՇԻՄԱԼՃԵԱՆ Տ., բժ., «Ծաղկահատութիւն կամ ծաղկի պատուաստում» (ընդարձակ)—2
ԱՅՎԱԶԵԱՆ ԳԱԲՐ. արքեպիսկ. Թարգ., «Կոիլովի առակները», բ. տիպ—80 կ.
Դիմել՝ Тифлисъ, въ Центральную Книжную Торговлю. (ռ.) 1—2

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում
ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ
XVIII ԴԱՐ
Առաջին մաս
ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊԷԿ
Ծախվում է. 1) հեղինակի մօտ, «Մշակի» խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакц. Мшакъ". 2) «Մուրճ» տպագրի խմբագրատանը։ Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Мурчъ. «Գաւառնէրէրդ» գրավաճառանոցում։ Հասցէն՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенберг"
Նոյն տեղերում ծախվում են նոյն հեղինակութեան ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ մնացած օրինակները։ Գինը 1 ռուբլի 50 կոպէկ։

Լոյս տեսաւ
ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ
„Առողջապահական նուէր նորատի կանանց"
գիրքը հետեւեալ բովանդակութեամբ
Առաջաբան։ Ցղի կնոջ առողջապահութիւնը։ Մնունդ։ Ցղութեան ֆիզիօլոգիան։ Սպիտակապարան։ Դաշտանի անկանոնութիւնը։ Տղոցկանի առողջապահութիւնը։ Նորածին երեխայի առողջապահութիւնը։ Ծիծ տալու արհեստը։ Ծծմայր։ Առամներ։ Մանկական հիւանդութիւններ։ բաքխտ, գեղձախտ, անգիլիա, կարմրուկ, կարմրախտ, դիֆտերիտ, ծաղիկ։ Ո՞վ մայրեր։ Վերջաբան։
ԳԻՆԸ 20 ԿՈՊԷԿ
Դիմել՝ Александрополь. Книжная торговля Вахрамянца. Նոյն տեղից կարելի է ստանալ՝ Ա. Բրուտեանի «Ռատիկական մրմունջներ» գ. տպագր.—60 կոպ. Եժի. «Լուսադիմին» 1 ր. եւ Ե. Թոփչեանի «Բէօրնսօն»—10 կոպ. «Մահմէդ»—7 կոպ. եւ «Մեսրոպ Մաշտոց»—կոպ. գրքերը։
Գումարով գնողներին զիջումն կը լինի։

ԿԱՐՍՍԻՄ
Ալէքսանդրօվսկայա փողոցի վրա, 1902 թուականի յունվարի 25-ից
բացվում է „ԵՒՐՕՊԱ" հիւրանոց
Բոլոր յարմարութիւններով։ Համարների գինը՝ օրական 70 կոպէկից սկսած մինչեւ 3 ռուբլի
3—5 Հիւրանոցատէր՝ ՄԿՐՏԻՉ ՔԱՑԱԽԵԱՆ

Մամուլի տակն է
ԲԺ. Վ. ԱՐԾՐՈՒՆՈՒ
«ԲԺՇԿԻ ԶՐՈՑՑՆԵՐԻ» 3-դ գրքոյկը (բազմաթիւ պատկերներով),
Վարակիչ հիւանդութիւնները եւ նրանց թոյները
վերնագրով։
Հեղինակը խնդրում է այն անձանց, որոնց մօտ իր գրքերից ապառիկներ կան մնացած, շուտով իրան հասցնեն։ 5—5

„Փ. Ն. ՓՐԻԴՕՆԵԱՆ"
ԿՕՆՖԷՏԻ ԵՒ ՇՕԿՕԼԱԴԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ
Կովկասեան դիւղատնտեսական ցուցահանդէսում մեր պատրաստած ապրանքները արժանացան
Կովկասում կոնֆէտի արդիւնաբերութեան
ՄԻԱԿ ՄԵԾ ԱՐԾԱԹԵԱՅ ՄԵԴԱԼԻ
Առանձնապէս յանձնարարում ենք. ՌԱՀԱԹ-ԼՈԽՈՒՄԻ, կարամէլ «ԻԻԲԻԼԻՑՆԱՑԱ» եւ առհասարակ բարձր յատկութեան կարամէլներ մրգեղէնով։
Գործարանում աշխատում են մայրաքաղաքի նշանաւոր վարպետներ։
Պատուէրներով դիմել. Թիֆլիս, Պավլովսկայա փողոց, սեփական տուն
Գործարանի հեռախօս № 362, գործարանական խանութինը № 772։
13—100 (հ. կ.)

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ դասընթացքի XIV շրջան
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՍԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ «Զեռնարկի առեւտրական եւ գործարանական հաշուապահութեան»
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
Երկու սեռի անձանց՝ 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, եւ եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական եւ կերօսինի գործարանական հաշուետուութեան։
Բ) Առեւտրական թուաբանութիւն։
Գ) Առեւտրական նամակագրութիւն։
Դ) Առեւտրական եւ մուրհակների կանոնագրութիւն։
Ե) Գեղագրութիւն եւ ամենավաղ ձեռքերի ուղղելը։
Պարապմունքները սկսվելու են 1902 թ-ի յունվարի 25-ից, ճաշից յետոյ, եւ պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր ՁՈՐՍ ամսից յետոյ։
ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԿՈՒՐՍԻ ՎՃԱՐՆ Է 60 ՐՈՒԲԼԻ
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ 6 ժամ երեկոյեան, ԿՈՒԿԻԱ, Նիկոլաեւսկայա փողոց, սեփական տուն, № 46։ (Николаевская ул. № 46)։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, հեղինակի մօտ, եւ Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ Գինն է 3 ր. 50 կոպէկ։ Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու։ 8—25

Дозволено Цензурою, Тифлисъ, 24 Января 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва. Б.-Ванкская ул.